

Ա. Ս. Կռօստ

ՄԱԼԱՐԻԱՆ 13—18-ՐԴ ԳԱՐԵԲԻ ՀԱՅ ՏԱՂԵՐԴՈՒՆԵՐԻ
ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵջ

«Մալարիան Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև
սովորական դարաշրջանը» մեր հատուկ աշխատության մեջ ցուց
հնք տվել, որ գեռ մեր թվականությունից շատ դարեր առաջ Հա-
յաստանի հարթավայրերի բնակչության մեջ տարածված է եղել
մալարիա հիվանդությունը։ Այդ մասին ամենահին վկայություն-
ները պահպանվել են Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին
կից Պետական Մատենադարանի բժշկական և բժշկության հետ
առնչություն լունեցող միջնադարյան բազմաթիվ ձեռագիր հուշար-
ձաններում առկա ժամանակության վերմի», «Գիր զերման և դողի»,
կամ «Համասն աղօթք տենդի» և այլ խորագիր կրող հնագույն հմա-
յակները կամ հմայիլները։

Տեսդային հիվանդությունների մասին հիշում են 5-րդ դարի
պատմիչներ՝ Մովսես Խորենացին («Պատմութիւն Հայոց», գիրք
2-րդ, գլ. 6), Եղիշեն («Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին»,
հինգերորդ եղանակ), այնուհետև 10-րդ դարում Գրիգոր Նարեկա-
ցին («Մատենա ողբերգութեան», բան իշ., խ.), 11-րդ դարում
Գրիգոր Մադիստրոսն իր Բաղերում: Վերջապես, մալարիային հի-
վանդությունների առաջացման, կլինիկայի և բուժման հարցերի
ուսումնասիրությանն ընդարձակ էշեր են նվիրել 12-րդ դարում
«Մեծ բժշկապետ» Մխիթար Հերացին («Զերմանց մխիթարութիւն»),
15-րդ դարում Ամիրդովլաթը և ուրիշ շատ միջնադարյան հայ
բժիշկներ։

Հատկապես 19-րդ դարի առաջին կեսից՝ Գլինկայի, Տորո-
պովի, Շոպենի, Զելինսկու և այլ ռուս հեղինակների աշխատու-
թյուններում մենք համաճարակագիտական արժեքավոր տվյալներ

հնգ գտնուամ Արարատյան Հարթավայրում շատ տարածված տեսդրային հիվանդությունների մասին:

Այսպիսով, այդ հիվանդությունը շարունակ զբաղեցրել և հետաքրքրել է շատ շատերին: Եվ այդ հասկանալի է, որովհետև դարբեր շարունակ մալարիան, ինչպես նաև բազմաթիվ այլ սուր վարակիչ հիվանդություններ կլանել են մարդկացին անթիվ գոհեր, տնտեսական անասելի ավերումներ պատճառելով մեր երկրին:

Որ մալարիան, իսկապես, մեր երկրի հարթավայրերի բնակչության համար եղել է մշտական և հարատէ մի աղետ, դա երևում է նրանից, որ այդ հիվանդությունը հաճախ հիշատակվել է նույնիւկ 13—18-րդ դարերի գեղարվիստական գրականության մեջ: Օրինակները շատ են, սակայն բավականանանք մի երկուաը վկայակոչելով:

14-րդ դարի հոչակավոր տաղերգու Հովհաննես Թէկուրանցին իր «Տաղ սիրո» բանաստեղծության մեջ՝ գովարանելով իր սիրած կնոջ գեղեցկությունը, նմանեցնում է նրան դարնանային արևի, աշնանային լուսնու հետ, և ապա շարունակում՝

«... Տեսդ բժիշկ է հիւանդին,
Առողջութիւն է զերմնոտին.
Աշքերդ ծով է ժարավածին,
Մոցդ է դրախտ անմահութեան,
՚ի յետ դարձնէ խլած հոգին,
Ո՛չ մեռանէ, ո՛չ ծերանայ,
Ո՛չ երեսվին դառնայ գեղին,...»:¹

Ինչպես տեսնում ենք, սույն բանաստեղծության մեջ, որպես գեղարվիստական համեմատություն ո՛չ միայն հանդես է գալիս զերմնոտին առողջություն պարզեցող բժիշկը, այլև բանաստեղծի և նրա ընթերցողների միջավայրում շափազանց տարածված մալարիան իր բնորոշ կողմերով: Նախ՝

Տեսդ բժիշկ է հիվանդին,
Առողջութիւն է զեմնոտին»,

ասելով հեղինակը նպատակ է ունեցնել պատկերացնելու տարիներ շարունակ տառապող մալարիկին, նրա մարմնում առաջացած

¹ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Մատենադարանի ձեռագիր № 7712, էջ 36—37:

յարահատուկ կլինիկական խոր փոփոխությունները, ինչպես մեր օրկրումն է ընդունված ասել՝ մետամարքիալին երևությներ, ուրուր տառապանք են պատճառել հիվանդ շերմնոտին և եղել են դժվար բուժելի կամ բոլորովին անբուժելի: Մեր այս դատողության օգտին են խոսում նաև բանաստեղծության վերջին տողերը, որի համեմատ մահամերձ շերմնոտն առողջանում, վերակենդանանանում և աղատվում է իրեն ծերացնող, դժգույն-դեղնավում հիվանդագին դմմբի արտահայտությունից:

Հետաքրքրական եղանակով է օգտագործում մալարիային հիվանդությունը, որպես համեմատություն, մի անհայտ տաղերգու (Պետ. Մատենադարանի ձեռ., № 7709, էջ 124 բ):

Նախքան հիշածս ստեղծագործության վկայակոչելը ու նրա մեկնությունը, ավելորդ չի լինի հիշեցնել, որ 11—14-րդ դարերում հայ հասարակական կյանքի մեջ սաստկացել էր դասակարգային շերտավորումը, որը սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման հետևանք էր: Հենց այս ժամանակաշրջանում գեղարվեստական դրականության մեջ մենք հանդիպում ենք հայ խոշորագույն բանաստեղծ Ֆրիկին, որն իր «Դանդատ» խորագիրը կրող ծավալում բնիթվածի մեջ բողոքում է սոցիալական անհավասարության և տիրող անարդարության դեմ:

«Մէկն ի պապանց պարոնորդի,
Մէկն ի հարանց մուրող լինի,
Մէկին հազար ձի ու ջորի,
Մէկին ոչ ու մի, ոչ մաքի...»:

Այս քառյակը ցույց է տալիս, որ երկրի սոցիալ-տնտեսական վիլինարաբերություններն ազդում և փոխում են գրականության թնմատիկան: Բացարձակ սոցիալական մոտիվների հետ մեկտեղ գրականության մեջ հանդիս են գալիս մարդու բարոյականության ու խղճի, այս կյանքի և ետ մահվան կյանքի վերաբերյալ «Ընդհանուր», ըստ էության, տիրող դասակարգերի շահերի գեմ ուղղած մոտիվներ:

Մեզ հետաքրքրող անհայտ բանաստեղծը ցանկանում է արտահայտել այն միտքը, որ հոգին ահեղ դատաստանի օրը պատասխանատու է մարմնի գործած հանցանքների» համար, այն «հանցանքների», որոնց ձգում է մարմինն այս կյանքում, հակադրվելով կասկածի տակ առնված հոգուն, նկեղեցու ու շահագործող դասակարգերի կողմից խոստացված ետ-մահվան կյանքին: Բա-

նաստեղծն այս միտքը պատկերավորում է կյանքից՝ Հայաստանի հարթավայրի պայմաններից վերցրած մի համեմատությամբ՝
աշոգին ի մարմնոյն ձեռին,
Կու դողայ զերտ շերմնոտիս:

Պարզ է, որ բանաստեղծի ստեղծած գեղարվեստական մտապատկերի հիմքը տվյալ միջավայրում հարատև գոյություն ունեցող, մալարիայի կլինիկական յուրահատուկ արտահայտությունը բնորոշող դողի տանջալից ֆազան է:

Մալարիան տեղ է գտել նաև 13-րդ դարի հայ ականավոր առակագիր ու քարոզիչ Վարդան Այգեկցու առակների մեջ:

«Ճերմուտ մի էր բազում աւրեայ. և խրատեցին զնայ,
«թէ գնայ ի դուռն քաղաքին. և առաջին մարդն, զոր
տեսանես, ասայ առ նայ, թէ՝ քոյդ ինձ և իմս քէզ:
Եւ ահայ գար ուրուկն մի, շարաւն երթար ի
յանձնէ նորա. և նայ դողաց յահէն և ասաց՝
«Ո՛վ եղբայր, քոյդ քեզ և իմս ինձու՝¹

Նախ, պետք է ասել, որ միջին դարերում գշերմուտ կամ շշերմնոտ» տերմիններն ամենուրեք գործ են ածել, որպես սինոնիմ, դժվար բուժելի կամ անբուժելի տենդով տառապող այն հիվանդների նկատմամբ, որոնց մոտ երկար տարիների ընթացքում մալարիայի ինֆեկցիայի պարբերաբար ախտահարման հետևանքով առաջացել են մալարիային յուրահատուկ պաթոլոգիական խոր փոփոխություններ:

Այստեղ հետաքրքրականն այն է, որ առակագիրը՝ շերմնոտովներումը համարելով ծանր տառապանք, հակադրում է ուրուկցավի: Հետ² և խորհուրդ է տալիս շերմնոտին ուրուկավորի համաձայնության դեպքում՝ նրա հետ փոխելու իր տառապանքը: Սակայն շերմնոտը տեսնելով ուրուկավոր մարդու տառապանքի շափը, սարսափում ու բացականչում է. «Ով եղբայր, քոնդ թող քեզ մնա, իմս՝ ինձու:

Մեր նյութի կապակցությամբ մեծ հետաքրքրություն է ներ-

¹ Ն. Յա. Մառ—«Ժողովածույթ առակաց Վարդանայ», Պետերբուրգ, 1894 թ., 2-րդ մաս, էջ 103:

² Հարկ ենք համարում, ի միջի այլոց, հիշելու, որ ուրուկ հիվանդությամբ տառապողին միջին դարերում կոչում էին բորստ, թերևս նկատի են ունեցել սիֆիլիսը, հաճախ շփոթելավ մեկը մյուսի հետ:

կայացնում նաև 17-րդ դարի վերշերին և 18-րդ դարի սկզբներին ապրած Հովհաննա նաղաշի մի բանաստեղծությունը, որ նվիրված է Երևան քաղաքին:

Բանաստեղծ՝ նկարագրելով Երևանը որպես աշխույժ առևտիրական կենտրոն և խոսելով Երևանցիների յուրահատուկ գծերի մասին, չի մոռանում ընդգծելու նաև այն հանգամանքը, որ մեր այժմյան մայրաքաղաքը լի է եղել ամեն տեսակի միջատներով, առաջին հերթին մոծակներով, ճանճերով, բողոքներով և այլն:

«... Ես էլ Երևան շատ կացայ,
Նոցա հասիաթն իմացա,
Հաղար բան ապսպարիս նոցա,
Կասիս՝ ուր է թէ մոռացա.
Ուզէն ելնին ամենըն քոշ,
Լի է մոծակ, մշիկ բողոշ,
Ալիշվերիշն է խիստ փոշ,
Դալոյ նամարդ առնելոյ խոշ,
Նաղաշն Երևան շատ կացավ,
Զիկարն այլեց հիւանդացաւ»:¹

Սույն բանաստեղծության մեջ ուշագրավ են այն տողերը, որ առ Հովհաննա նաղաշը երևանցիներին մոռացկոտ է անվանում: Թվում է մեզ, որ հեղինակը՝ բժիշկ Ալինելով հանդերձ, շփվելով տեղացիների հետ և ունենալով լավ դիտողություն, կարողացել է նշել մալարիայով երկար տարիներ տառապող մարդկանց որոշ շափով բնորոշ գծերից մեկը՝ մոռացկոտությունը:

Ուշագրավ է նաև բանաստեղծի հայտնած այն տեղեկությունը, որ երևանցիները մոծակների ու այլ միջատների տաֆանելի հալածանքներից փրկվելու համար՝ ամառը բարձրացել են մերձակա լա լեռները՝ քոչվորների մոտ ամառանոց:

Միդ հետաքրքրող նյութի տեսակետից առանձնակի արժեք է նիրկայացնում 18-րդ դարի բանաստեղծ Ազբար Աղամի բանաստեղծություններից մեկը, որը կրում է «Ազբար Հաղամ» Մուհամեմազը վերնագիրը և պահպանվել է Մատենադարանի № 3751 ձեռագրում: Բանաստեղծությունն ամբողջապես նվիրված է Երևանում մալարիայով հիվանդ մարդկանց և այդ հիվանդության թողած բերեց մի հատված:

¹ Զեռ. № 1052/3263 «Գովասանութիւն Երևանա քաղաքին» ուսանակութիւն մի հատված:

Հետևանքների նկարագրությանը, այդ իսկ պատճառով ստորև մեջ
ենք բերում բնագիրն ամբողջությամբ:

«Ե՞լ հազարաթ էսօր փիս ա հալըս իմ,
էրոցը հարցնում այ ահվալըս իմ,
Կրակի պէս էրլում այ ջամալըս իմ,
Դողը կտրել այ էն ղալմաղալըս իմ:
Առաւտան առողջ եկայ բաղարը,
Տեսայ, վլրես ցաւ թէքէց նազարը,
Պըտըտվեց, պըտըտվեց գցեց գիւզարը,
Զանս առաւ գողերոցկի աղարը,
Կորցրեցի խելքըս ու քեմալըս իմ:
Դողէրոցկը իրարու հետ թայ արի,
Երկուաին էլ ջանումըս լաւ սազ արի,
Զեշով կտրեցի անդաշնս զայ արի,
Համ ջանս գնաց, համ բաղամալըս իմ:
Մի հենց բան չի, որ ուրիշներին ծախէս,
Ամեն տարի լաւ ճանաչել այ եախիս,
Էս թավուր բանից լաւ այ իղբալըս իմ:
Չիմ գիտում՝ թարիֆն անեմ էստոնց որին,
Իսկի քեափուրը չի ըլնի մեր օրին,
Դողն ինձ բռնեց, էրոցկը՝ Դրիգորին,
Ամեն տեղից կըտրվեց թահալըս իմ:
Ինչ ֆանդերով դողն եկավ ջանըս առաւ,
Ինչքան զեղ ու զիր արինք, ետ չի դառաւ,
Ես ջահել ի, շինեց հալեոր, պառաւ,
Զահել տեսնելիս՝ գալիս էր լալըս իմ:
Առաւետնից մարդը ըլնում այ լափի պէս,
Մի օրվա միշին կտրեց մանգալըս իմ:
Իրիկնապահին կաշումայ ղափի պէս,
Ես շեմ կարում, թէ նստեմ դուքանումս,
Հաղամն ասեց՝ հաստարի նմ ջանումըս,
Թա ո՞նց կըլնի ախըր ու ահվալըս իմ»:¹

Ինչպես պարզվում է, սույն բանաստեղծությունը ամբողջապես
նվիրված է մալարիային և ներկայացնում է այդ հիվանդությունը
մի քանի կողմերով:

¹ Զեռագիր № 3751, էջ 1—2:

Բանաստեղծության մեջ նկարադրված է մի առողջ մարդ, որի մոտ անսպասելիորեն սկսվում է մալարիայի կլինիկական կարևորագույն ախտանիշներից՝ «դող և էրոցքի» տանջալից ֆազան, որին հաջորդում է մարմնի սաստիկ այրոցք— «կրակի պէս էրլում այօ»: Հիվանդը կորցնում է առողջ դատելու ունակությունը, ուժը և ամեն ինչ հասկանալու ընդունակությունն ու արժանապատվությունը՝ «կորցրեցի խելքս ու քեամալըս իմ»,— գրում է նաև Ալնուհետև իրար հաջորդող մալարիայի նոպաները այն աստիճան ուժազդիկ ու հյուծել են հիվանդին, որ նա երկար ժամանակ պառկած մնալով անկողնում, չի կարողանում աշխատանքի դուրս դաշտ, որի հետևանքով և քայրայվում է նրա տնտեսությունը, և նա աղքատանում է:

Ծեալիստ բանաստեղծը գրում է. «Համ ջանս գնաց, համ բադայմալըս իմ»: Բժշկության հետ ոչ մի առնչություն չունենալով հանդերձ՝ այնուամենայնիվ հեղինակը միանդամայն ճիշտ է վերադրել մալարիային իր վաղաժամ ծննդությունը և որ այդ հիշանդությունը կարող է բոլորովին երիտասարդ մարդկանց այլանդակել, կերպարանափոխել ու դարձնել ծերունադեմ»:

«Ես ջահել ի, շինեց հալւոր պառաւ,
Հահել տեսնելիս՝ գալիս է լալըս իմ»:

Այս բանաստեղծության մեջ, ճիշտ է, հեղինակը նկարագրում է ինքն իրեն և իր ծանոթներից մեկին՝ մալարիայով տառապող դրիգորին, որն այդ օրերին մեռել է: Իրականում խոսքը վերաբերում է նրեան քաղաքի ազգաբնակչության, որի զգալի մասը տառապում էր մալարիայից: Ամենատարածված, դաժան և հարատև տլդ ցավն այնքան սարսափելի է եղել ժամանակակիցների համար, որ հեղինակն անգամ իր թշնամուն չի ցանկացել այդպիսի դրության մեջ, այսինքն՝ մալարիայով հիվանդ տեսնել «իսկի քյափուրը չի ըլնի մեր օրին»,— գրում է նաև Մալարիայից ազատվելու համար բազմաթիվ միջոցների դիմելուց հետո՝ երբ ոչ մի փրկություն չի գտնում իրեն ծերացնող «հայւոր» դարձնող ««դողերոցքից», հեղինակն ահարեկված և հուսահատ բացականչում է՝ «Բա ո՞նց կըլնի ախսըր ու ահվալըս իմ»:

Այնուհետև 18-րդ դարի երկրորդ կեսի հայ հոչակավոր բանաստեղծ՝ աշուղ Սայաթ-Նովան «Ամեն սազի մեջըն գոված» իր նորդի մեջ, գովարանելով իր սիրած երաժշտական գործիքը, գրում է.

«... Շատ տիսուր սիրու կու խնդացնես, կու կըտրիս
Հիվընդի գողըն»
Յիփ քաղցըը ձայնըտ վիր կոնիս, բաց կովի
Հիդըտ խաղողնաւ¹

Բոլորովին պատահական չպետք է համարել Սայաթ-Նովայի սույն վկայությունը և ոչ էլ բանաստեղծի երևակայության արդյունքը այն, որ նա իր սիրած երաժշտական նվազը համարում է հիվանդի գողը կտրելու միջոց:

Այս կապակցությամբ պետք է ասենք, որ հնագույն ժամանակներից սկսած՝ ինչպես բոլոր ժողովուրդների, այնպես էլ հայերի մոտ զանազան հիվանդություններ բուժել են նաև երաժշտության միջոցով: Այդ առթիվ միշնադարյան հայ բժիշկների քննության առածու աշխատություններում պահպանվել են միայն անուղղակի տվյալներ՝ ինչպես օրինակ՝ Միսիթար Հերացին գրում է՝ «Որ ի սիրու է ելել՝ անուշացու և հանդարտացո, և որ տրտմել է՝ սրբաշեշտացու և ուրախացո...»:² Այստեղ կարելի է մտածել, ինչպես երաժշտությանը, այնպես էլ բժշկի՝ հիվանդին ուղղված անմիշական հոգեպես ներգործող, հանգստացնող խոսքի մասին: Նույն կարգի տեղեկությունների մենք հանդիպում ենք Ամիրդովլաթի և այլ միշնադարյան հայ հեղինակների աշխատություններում:

Այս տեսակետը բավականաշափ մանրամասն զարգացնում է ռվասն գուասնական արուեստից խորադիրը կրող գրական հուշարձանի հեղինակը: Սա նկաղագրում է փողի, քնարի, հոռոպկի, զանկի, բարբոտի և այլ երաժշտական գործիքների կատարած զանազան նվազածության քարերար ներգործությունը տարբեր հիվանդությունների, ներառյալ մալարիայի դեպքում: Նա գրում է.

«Զին զբնութիւն հրոյ ունի, որ է տաք և չոր, երկու լարն զոր տութայ ասեն նման սաֆրային է: Երրորդ լարն՝ Մէթայն նման սավտային է: Չորրորդ լարն կոչի պամ, այն պլղամին է, պլղամին: արեան հակառակ է... Եթէ ոք յարենէ հիւանդ է՝ մերկ նստեալ երգեն զպամն ի պարապուտին, որ օգտէ և հանգուցանէ զմարմինն եւ թէ հիւանդութիւնն ի պալղամին է՝ զզիլն երգէն, որ տաք ու չոր է և պլղամին հակառակ: Եթէ սաֆրայն շատացել լինի առ մարդն չէ պարտ զզիլն երգել, զի տաք և չոր և հրածին է, և սաֆրայն այլ

¹ Սայաթ - Նովայ - «Խաղերի ժողովածու», Երևան, 1945 թ., էջ 1:

² Միսիթար Հերացի - «Զեբանց միմիթարութիւն», 1832 թ., էջ 15:

նոյն է, այլ զպամն Երգիլ պիտի, որ հով է գեճ և յաղթող սաֆրա՛
յին...»:²

Ամբողջական տեքստը, ինչպես և նրա պատմա-բժշկագիտա-
կան վերլուծությունը տալիս ենք «Մալարիան Հայաստանում հնա-
դույն ժամանակներից մինչև սովետական դարաշրջանը» մեր ան-
տիպ աշխատության մեջ:

Ամփոփելով մեր մտքերը՝ պետք է ասենք, որ հատկապես մա-
լարիայի վերաբերյալ մեզ ժառանգություն է մնացել բավականա-
շափ հարուստ և տարբեր բնույթի գրականություն:

Սույն հանդամանքը մեզ բերում է այն անտարակուսելի հա-
մոզմանը, որ մալարիան մեր երկրի հարթավայրերի բնակչության
համար եղել է մշտական և հարատև ցավ:

Ժողովրդական շարիք հանդիսացող մալարիան, ինչպես և
մյուս սուր համաճարակային հիվանդությունները, դարձր շարունակ
քայլակել են մեր ժողովրդի տնտեսությունը, հյուծել են նրան ֆի-
զիկապես Միայն սոցիալիստական հասարակության ժամանակա-
շրջանում, բոլշևիկյան պարտիայի և սովետական պետության
օրոք ծավալվեցին պլանային, լուրջ և հետևողական հակամալա-
րիային կոմպլեքսային աշխատանքներ սովետական ժողովրդին
այդ պատուհասից վերջնականապես ազատելու համար:

A. C. ԿՅՈՅԱՆ

МАЛЯРИЯ В ТВОРЧЕСТВЕ АРМЯНСКИХ ПОЭТОВ XIII—XVIII вв.

Дошедшие до нас на армянском языке различные старинные литературные источники свидетельствуют о большом распространении малярии в прошлом среди населения армянских низовьев. О громадном вреде, причиняемом малярией населению Армении, свидетельствует, между прочим и художественная литература XIII—XVIII вв., в частности, поэзия, в которой приводится немало данных о малярии и ее жертвах.

Из писателей армянского средневековья такие сведения

² Զետագիր № 4618, էջ 56 բ:

мы встречаем у Иоанеса Тлкуранци, Вардана Айгекци, Мкртыча Нагаша, Иовнатаана Нагаша, Саят-Новы и т. д.

Поэтами армянского средневековья использованы для создания художественных образов, метафор, сравнений и т. д. данные, относящиеся к видимым клиническим проявлениям малярии, огромному вреду, причиняемому этой болезнью здоровью людей и вредным влиянием ее на материальное благополучие населения.

Поэт XIV в. Иоанес Тлкуранци в своем стихотворении «Песня любви», восхваляя красоту любимой женщины, приводит красивые поэтические метафоры о том влиянии, которое может оказать ее вид на больных, страдальцев—маляриков.

В поэтическом своем вдохновении автор говорит о ее красоте, которая способна вылечить преждевременно состарившегося от малярии и избавить его от приступов малярии.

Весьма интересно стихотворение поэта, жившего в конце XVII и в начале XVIII вв., Иовнатаана Нагаша. Поэт, описывая город Ереван, как оживленный торговый центр, отмечает, что в городе этом он встречал обилие разных насекомых, особенно комаров, москитов, мух и т. д.; поэтому в жаркие месяцы население принуждено было выезжать в горные районы к кочевникам. Автор говорит, между прочим, о плохой памяти ереванцев, что, видимо, он считал характерным свойством больных, годами страдавших малярией.

Любопытным является стихотворное произведение поэта XVIII в. Азбар Адама, озаглавленное «Мухаммаз» (т. е., пятистишие).¹ Оно посвящено переживаниям и страданиям маляриков, живущих в Ереване, а также описанию некоторых последствий этой изнурительной болезни. Автор подробно описывает внезапное наступление малярийного приступа у одного здорового человека, занятого обычной работой. С достаточной ясностью описывается начало и течение малярийного приступа, период озноба, за которым следует высокая температура («пылает словно огонь тело больного»), в результате чего больной теряет свою физическую силу, разум и сознание его помрачаются, как и способность здравого мышления («поте-

¹ Рукопись Матенадарана № 3751, стр. 1—2.

рял я рассудок и достоинство свое»—жалуется больной). Приступы, следующие за первой вспышкой болезни, продолжает поэт, так обессилили и истощили больного, что он долгое время оставался в постели, не будучи в состоянии выйти на работу. В результате всего этого развалилось хозяйство больного, что привело его к крайней материальной нужде.

Поэт говорит, что больной в результате своей болезни преждевременно состарился:

«Был я молод, в старика (болезнь) обратила меня,
При виде молодых, слезы льются у меня».

Эта распространенная и грозная болезнь наводила столь большой ужас на людей, что, по словам поэта, он не пожелал бы, чтобы болезнь эта поразила даже его врага.

После долгого лечения, когда у поэта, который сам страдал малярией, иссякли все средства для борьбы с этой болезнью, он, потеряв всякую надежду на спасение, горестно вопрошает:

«Какой же исход предстоит мне?»

Большинство прочих поэтических произведений с теми или другими вариациями повторяют слова и взгляды приведенных авторов о малярии и том зле, каковым эта болезнь являлась для средневековых армян.